

Խաչվերացի տոնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

← էջ 1

Բայց նույնիսկ ամենամերձավոր հետևորդները երբևէ զրկված չեն եղել ընտրության ազատությունից», – ասաց Արտակ Սրբազանը՝ հաստատելով, որ նա, ով ճաշակում է Տեր Դիսուսի խոսքի զորությունը, հավիտենական կյանքի քաղցրությունը, երբեք չի հեռանում Փրկչից: Այս առնչությամբ պատարագիչ Սրբազանը կարևոր նկատեց նաև սեփական անձի ուրացումը: Արտակ եպիսկոպոսը նշեց, որ աշխարհում մեծագույն սխրանքները, ձեռքբերումները, հաղթանակները իրականություն են դարձել

անձնագոհության, սեփական ես-ը ստորադասելու արդյունքում, իսկ քրիստոնեության մեջ դրա մեծագույն օրինակը Գողգոթան է:

«Սեզանից յուրաքանչյուրի ճանապարհը պիտի անցնի Գողգոթայով, որպեսզի մենք ինչ-որ չափով կարողանանք հասկանալ այն մեծ զոհողությունը, որ Քրիստոս արեց մեզ համար:

Գողգոթան թեև փոքրիկ մի բլուր է, սակայն իր կարևորությամբ տեսանելի է աշխարհի չորս ծագերից, որտեղից լույսն է ծառագում: Այն աշխարհի բոլոր ճանապարհների խաչ-մերուկն է: Եթե մեր կյանքի ճանապարհը չի

անցնում Գողգոթայով, ապա ոչ մի երաշխիք չունենք, որ այն չի տանի դեպի դժոխք: Իսկ Գողգոթան պայքարի, զոհողության ու հաղթության բարձունքն է: Առանց պայքարի ու զոհողության՝ չկա փրկություն», – արձանագրեց Սրբազան Դայրը:

Իր խոսքում Արտակ Սրբազանը ընդգծեց, որ յուրաքանչյուր մարդ իր խաչն ունի, կյանքի իր ճանապարհը՝ լի դժվարություններով, բարդություններով, երբեմն վշտերով ու տառապանքով: Այս առիթով պատարագիչը հորդորեց հավատացյալներին՝ չվարանել վերցնելու իրենց խաչը, իսկ Քրիստոս կպար-

զկի այն կրելու զորությունը, որովհետև որևէ մեկին չի տրվում ավելի ծանր, քան նա կարող է կրել:

Վերջում Արտակ եպիսկոպոսը ներկայներին պատգամեց մերժել եսասիրությունն ու փառամոլությունը, հրաժարվել նյութապաշտության ու աշխարհատենչության խոտոր ընթացքներից, վերցնել խաչը, տեր լինել Քրիստոսին նմանվելու իրենց իրավունքին ու պարտականությանը, գնալ Նրա հետևից մինչև Գողգոթա և հաղթահարել Գողգոթայի տառապալից բլուրն ու մահվան ստվերները:

Երեկոյան ժամերգություն և Խաչվերացի հանդիսավոր թափուր



Սեպտեմբերի 14-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ Միաձնաէջ Մայր Տաճարում տեղի ունեցան Երեկոյան ժամերգություն և Խաչվերացի հանդիսավոր թափուրը, որի առիթով հավատացյալների երկրպագության և մխիթարության համար դուրս էր բերվել Տերունական Սուրբ Խաչափայտի մասունքն ամփոփող մասունքարանը:

Մայր Տաճարի շրջափակում կատարվեց նաև Անդաստանի կարգ, օրհնվեցին խաչը զարդարող ռեհանը և աշխարհի չորս կողմերը:



ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց



Սեպտեմբերի 4-ին Նիկիայի առաջին տիեզերաժողովի 1700-ամյակին նվիրված համաժողովի մասնակիցներին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց սեպտեմբերի 4–7-ը Մայր Աթոռում անցկացվող «Ապրելով Հավատամքն այսօր. Նիկիայի առաջին տիեզերաժողովի 1700-ամյակի հիշատակում» խորագրով միջեկեղեցական համաժողովին մասնակցող Քրիստոնեական եկեղեցիների և միջեկեղեցական կառույցների ներկայացուցիչներին:

Իր խոսքում Նորին Սրբությունը կարևորեց միջեկեղեցական այս հավաքի անցկացումը, ինչը հնարավորություն է ընձեռում բնառելու եկեղեցիների առջև ծառացած մարտահրավերները, սերտացնելու միմյանց միջև փոխգործակցությունը տարբեր ոլորտներում, ինչպես նաև քայլեր նախաձեռ-

նելու եղբայրության ոգու ամրապնդման ուղղությամբ: Հայոց Հովվապետը գոհունակությամբ արձանագրեց, որ Հայոց եկեղեցու և քույր եկեղեցիների, հարանվանությունների ու միջեկեղեցական տարբեր կառույցների միջև առկա են ջերմ փոխհարաբերություններ:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետն իր երախտագիտությունը փոխանցեց նաև եկեղեցիների պետերին ու հոգևոր առաջնորդներին՝ դժվարին ժամանակներում Հայաստանին և հայ ժողովրդին ցուցաբերած աջակցության ու զորակցության համար:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց նաև միջեկեղեցական հարաբերություններին առնչվող ներկաների հարցերին:



անդրադարձավ համայնքի հայրենամարտի ու եկեղեցասեր կյանքին՝ աղոթքով հիշելով Սրբոց Վարդանանց եկեղեցու և համայնքի մկրտչական հիմնադիրներին, որոնք, վերապրելով համիդյան ջարդերը, ԱՄՆ-ում ամուր հավատքով ու հայրենասիրական ոգով վերակերտվել են իրենց ազգային կյանքը, և համախմբվելով եկեղեցու շուրջ՝ պահպանել իրենց ինքնությունը: Ամենայն Հայոց

Կաթողիկոսն ուրախությամբ արձանագրեց, որ նրանց ավանդն այսօր էլ պտուղ է տալիս մեր սերունդների կյանքում, որոնք շարունակում են ակտիվ պահել համայնքի ազգայնեկեղեցական կյանքը: Նորին Սրբությունը պատգամեց ուխտավոր հայոհներին հավատքով զորացած վերադառնալ իրենց համայնքը և ամուր պահել կապը հայրենիքի ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ:

Սեպտեմբերի 14-ին Ամերիկայի հայկական համագումարի ղեկավար կազմին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ամերիկայի հայկական համագումարի (ԱՀՀ) համանախագահ Օսկար Թաթոսյանին, նախկին համանախագահ Էմթոնի Բարսամյանին և գործադիր տնօրեն Բրայան Արդունին:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց հայ ժողովրդի և հայրենիքի առջև ծառացած ներքին ու արտաքին մարտահրավերներին, բռնի տեղահանված արցախահայության արդար իրավունքների պաշտպանության հիմնախնդիրներին: Կարևորվեցին ազգային միասնականության ամրապնդումը և աշխարհասփյուռ հայ ժողովրդի ներուժի համախմբումը՝ ի նպաստ այս բարդ ժամանակներում դժվարությունների հաղթահարման, հայրենիքի զորացման ու շենացման: Վեհափառ Հայրապետը



բարձր գնահատեց ԱՀՀ-ի հետևողական ջանքերը՝ հայության շահերի պաշտպանության և Հայաստան–Սփյուռք կապերի ամրապնդման գործում:

Սեպտեմբերի 8-ին ԱՄՆ հայոց արևելյան թեմի ուխտավորներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ հայոց արևելյան թեմի Չելմսֆորդ քաղաքի Սրբոց Վարդանանց եկեղեցու համայնքի ուխտավորներին՝ ուղեկցությամբ հոգևոր հովիվ Արժանապատիվ Տ. Խաչատուր քահանա Քեսաբլյանի:

Հայցելով Վեհափառ Հայրապետի օրհնությունը՝ Տեր Խաչատուրն ընդգծեց, որ Սրբոց Վարդանանց եկեղեցու համայնքը, լինելով հնագույններից մեկն ԱՄՆ-ում, ամուր է պա-

հել իր ինքնությունը, հավատքն ու հայրենասիրական ոգին: Տեր Հայրը, իր երախտագիտությունը հայտնելով Նորին Սրբությանն ընդունելության համար, հավելեց, որ ուխտավորները Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին են այցելել իրենց ուխտը վերանորոգելու և հայրենիքի հետ կապը զորացնելու համար:

Հայոց Հայրապետը, իր օրհնությունը բաշխելով ուխտավորներին, գոհունակությամբ

Մայր Աթոռում մեկնարկեց միջեկեղեցական համաժողով՝ նվիրված Նիկիայի առաջին տիեզերաժողովի 1700-ամյակին

Մայր Աթոռում 4-ին Ն. Ս. Ս. Ս. Գարեգին Երկրորդ Ճայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մեկնարկեց «Ապրելով Հավատամքն այսօր. Նիկիայի տիեզերաժողովի 1700-ամյակի հիշատակում» խորագրով միջեկեղեցական համաժողովը: Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի նախաձեռնությամբ կազմակերպված հավաքի նպատակն է համախմբել երիտասարդ հոգևորականների՝ համատեղ խորհելու եկեղեցու առջև ծառացած մարտահրավերների շուրջ, ուսումնասիրելու Նիկիական Հավատամքի իմաստն ու արդիականությունը մեր օրերում և խթանելու եղբայրության ու համագործակցության ոգին:

Սեպտեմբերի 4–7-ն անցկացվող համաժողովին մասնակցում են Հայոց եկեղեցու նվիրապետական Աթոռների՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության, Կ. Պոլսի և Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունների, ինչպես նաև քույր եկեղեցիների, տարբեր հարանվանությունների և միջեկեղեցական կառույցների ներկայացուցիչներ:

Համաժողովը բացվեց Տերունական աղոթքով, որից հետո ներկաներին ողջունեց Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Հոգեշնորհ Ս. Գարեգին վարդապետը Համբարձումյանը: Այնուհետև մասնակիցներին իր օրհնությունն ու պատգամը բերեց Ն. Ս. Ս. Ս. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Նորին Սրբությունն իր խոսքում ընդգծեց, որ Նիկիայի առաջին տիեզերաժողովը որոշիչ նշանակություն ունեցավ ոչ միայն Քրիստոսի Սուրբ եկեղեցու ուղղափառ հավատքի պահպանության, այլև տերունավանդ առաքելության առավել արդյունավորման համար. «Առաջին տիեզերաժողովը համախմբեց բազում եկեղեցիների՝ միասնաբար հակադարձելու եկեղեցական կյանքը հուզող երևույթներին, ավետարանական ճշմարտությունները խեղաթյուրող փորձերին, զերծ պահելու հավատքը կամայական մեկնաբանություններից ու տարաբնույթ մոլորություններից:

Ընդհանրական եկեղեցին Նիկիայի առաջին տիեզերաժողովի գումարումով, որին Հայոց եկեղեցուց իր մասնակցությունը բերեց Արիստակես Հայրապետը՝ որդին Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Կաթողիկոսի, սահմա-



նեց Նիկիական Հանգանակը և հաստատեց Քրիստոսի Աստվածության վերաբերյալ եկեղեցու ամխախտելի վարդապետությունը: Այն դարձավ ամուր խարիսխը քրիստոնեական հավատքի, որով նաև սահմանվեցին աստվածաբանական եզրեր և հիմնադրույթներ, և բանաձևվեց Քրիստոսի եկեղեցին որպես մի, ընդհանրական և առաքելական: Ժողովում ընդունված քսան կանոնները ևս կարևոր ուղեմիջ դարձան եկեղեցու ծիսականության կյանքում, նվիրապետական կարգի ընկալումներում»,– մեջ Հայոց Հայրապետը՝ փաստելով, որ Նիկիայի առաջին տիեզերաժողովը, աշխարհի ծագերից 318 հայրապետների համախմբումով, դարձավ վահանը քրիստոնեական հավատի և վկայությունը եկեղեցու ընդհանրականության և միասնականության:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն արձանագրեց, որ Նիկիական Հանգանակն այսօր ևս միավորում է տարբեր մշակույթներից ու միջավայրերից ելող քրիստոնյաներին և շարունակում մնալ ուժ և զորություն պարզևող քրիստոնեական հավատի ամեղծ ակունքը: Նորին Սրբությունն ընդգծեց նաև, որ այսօր եկեղեցու փորձառությամբ ու սուրբ հայրերի կողմից փոխանցված օրինակներով պիտի առավել ջանք գործադրվի ի խնդիր հավատ-

քի պահպանության, աշխարհում խաղաղության, մարդկանց միջև հաճության երկնային պատգամի տարածման:

«Նիկիական տիեզերաժողովը 1700 տարի անց համախմբել է ձեզ մի երկրում, որ անասելի հալածանքների, մեղությունների և փորձությունների է ենթարկվել հանուն Քրիստոսի: Այսօր էլ մեր ժողովուրդը փորձությունների միջով է անցնում: Տակավին չեն ամոքվել վերքերը, որ պատճառվեցին մեր ժողովրդին 2020 թվականին Ադրբեջանի պարտադրած պատերազմի հետևանքով, երբ սեփական պատմական հողի վրա անկախ ու ապահով ապրելու ու բազմադարյա սրբավայրերում ազատորեն աղոթելու ցանկության պատճառով զոհվեցին ու հաշմանդամ դարձան հազարավորներ, որբացան տասնյակ հազարավոր ընտանիքներ, իսկ 2023 թվականին Արցախից բռնի տեղահանվեց ողջ բնակչությունը՝ հարյուր քսան հազար ունեզրկված հայրերից: Ադրբեջանում նաև առ այսօր շարունակվում են ապօրինաբար պահվել Արցախի պետական այրեր և ռազմագերիներ: Բռնազավթված Արցախում ներկայիս ոչնչացվում և վնասվում են մեր բազմադարյա հոգևոր-մշակութային ժառանգությունը, պատմական սրբավայրերը, նաև յուրացվում ոչ հայկական լինե-



լու կեղծ պատճառաբանությամբ»,– ասաց Վեհափառ Հայրապետը՝ հավելելով, որ աշխարհում այսօր տիրող ցավալի պատկերի հանդիման առավել հրամայական է դառնում եկեղեցիների համագործակցության ոգու դրսևորումը:

Հայոց Հովվապետը վստահություն հայտնեց, որ աղոթքի, երկխոսության, արդյունավոր հարաբերությունների և միասնական ջանքերի միջոցով է հնարավոր մարդկության կյանքում առատացնել հաճությունն ու համերաշխությունը, որպեսզի կանխվեն եղեռնագործությունները, դադարեն դժբախտությունները, և աշխարհում գերակայի Աստծո կամքը:

Քառօրյա համաժողովին բանախոսություններով ու զեկույցներով հանդես եկան Արևելյան Ուղղափառ, Ուղղափառ, Կաթոլիկ, Լյութերական և այլ եկեղեցիների, ինչպես նաև միջեկեղեցական կառույցների ներկայացուցիչներ: Տեղի ունեցան նաև բնադրություններ բարձրացված հարցերի ու թեմաների շուրջ:

Համաժողովի մասնակիցներն այցելեցին տարբեր սրբավայրեր ու թանգարաններ, մասնակցեցին եկամենիկ աղոթքների, ծանոթացան Հայոց եկեղեցու ու ժողովրդի հոգևոր-մշակութային ժառանգությանը:



Դուրս բերվեց Սուրբ Արիստակես Հայրապետի մատուցած Կրթական Կառավարություն

Մայր Աթոռում 6-ին Միաձուլված Մայր Տաճարում, հանդիսապետությամբ Ն. Ս. Ս. Ս. Գարեգին Երկրորդ Ճայրագույն Պատրիարք և Ամենայն Կաթողիկոսի, կատարվեց Կիրակնամուտի հանդիսավոր ժամերգություն:

Ի նշանավորումն Նիկիայի առաջին տիեզերաժողովի 1700-ամյակի՝ դուրս բերվեց տիեզերաժողովին Հայոց եկեղեցու կողմից մասնակցած Սուրբ Արիստակես Հայրապետի մատուցած Կրթական Կառավարություն:

Կիրակնամուտի ժամերգությանը ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, քույր եկեղեցիների, միջեկեղեցական կառույցների ներկայացուցիչներ և հավատացյալներ:



Հայտարարություն

Մայր Աթոռում 2-ին օրենքի և իրավունքի կոպտագույն ոտնահարմամբ ևս մեկ անգամ երկարաձգվեց Գերաշնորհ Ս. Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանի կալանքի ժամկետը:

Խիստ բացահայտ է, որ դատարանը, արդարադատություն իրականացնելու փոխարեն, ակնհայտորեն միացել է իշխանությունների հրահրած հակաեկեղեցական արշավին՝ ստանձնելով եկեղեցականների

և եկեղեցուն աջակցող անձանց նկատմամբ հաշվեհարդար կիրառելու անպատվաբեր դերակատարություն:

Հարկ է վերջ տալ ապօրինությունների՝ այդ թվում խտրական մոտեցմանը, և անհապաղ ազատ արձակել ինչպես Գերաշնորհ Ս. Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանին, այնպես և կեղծ մեղադրանքներով կալանավորված անձանց:

3.09.2025 թ.

Նոր նշանակումներ

Ն. Ս. Ս. Ս. Գարեգին Երկրորդ Ճայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի հայրապետական տնօրինությամբ կատարվել են եկեղեցականների նոր նշանակումներ:

Արթիկի թեմի առաջնորդ Գերաշնորհ Ս. Նարեկ եպիսկոպոս Ավագյանը համատեղության կարգով առժամապես նշանակվել է Շիրակի թեմի հոգևոր տեսուչ՝ առաջնորդական լիազորություններով:

Հոգեշնորհ Ս. Զաքարիա ծայրագույն վարդապետ Բաղումյանը նշանակվել է Մայր Աթոռի Քարոզչական կենտրոնի տնօրեն՝ ազատելով Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրենի պարտականություններից:

**Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի**

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Վատիկան

Մայր Աթոռում 15-ին Ն. Ս. Ս. Ս. Գարեգին Երկրորդ Ճայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Վատիկան, որ հանդիպում կունենա Հռոմի Սրբազան Քահանայապետ Լևոն 14-րդ Պապի հետ: Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղեկցում են

Գևորգյան հոգևոր ճեմարանի ասպիրանտուրայի բաժնի ղեկավար Գերաշնորհ Ս. Դանիել եպիսկոպոս Ֆրնտուրյանը, Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Հոգեշնորհ Ս. Գարեգին վարդապետ Համբարձումյանը, Վեհափառ Հայրապետի

զավագանակիր Հոգեշնորհ Ս. Եսայի արքեպիսկոպոս Գրիգորյանը և Կաթողիկոսական գրասենյակի տնօրեն Արժանապատիվ Ս. Վահրամ ավագ քահանա Մելիքյանը:

Վատիկանում Վեհափառ Հայրապետին կմիանան Արևմտյան Եվրոպայի Հայրապե-

տական պատվիրակ և Վատիկանում Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ Գերաշնորհ Ս. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանը և Մեծ Բրիտանիայի և Իռլանդիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Ս. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանը:

Հայ մատենագրության անդրադարձները Նիկիայի առաջին տիեզերածողովին

«Մի՛ փոփոխեր զսահմանս
հաւատոյ՝ զոր հաստատեցին
հարքն քոյ»:

Ույն հոգվածը նվիրված է հայ պատմագրության և մատենագրության անդրադարձներին Նիկիայի ժողովին, դրանց վերահաման ու համակողմանի ուսումնասիրությանը: Մեր հետազոտության դաշտում եղել են 5-րդ դարից սկսած մինչև 19-րդ դարի հայ նշանավոր պատմագիրներն ու Հայ եկեղեցու ազդեցիկ դավանաբաններն ու աստվածաբանները, որոնց աշխատասիրությունների քննությանն էլ միտված են եղել մեր գիտական ջանքերը: Նյութը համակարգելու համար հողվածում կատարել ենք բովանդակային բաժանումներ: Հաշվի առնելով, որ մեր ուսումնասիրության առարկան ամբողջապես գրաբար է, և ոչ բոլոր գործերն են առայժմ թարգմանված, բոլոր մեջբերումները կատարել ենք բնագրային լեզվով՝ պահելով միօրինակություն:

1. Նիկիայի ժողովը Ոսկեդարյան պատմիչների երկերում

325 թ. Բյուզանդիայի Նիկիա քաղաքում (ներկայիս Իզմիթ, Թուրքիա) Կոստանդինոս Մեծ կայսեր (306–337 թթ.) կողմից գումարվեց պատմական մի ժողով, որը նոր թափ հաղորդեց քրիստոնեական վարդապետական մտքի ընթացքին: Նիկիայի ժողովն ունեցավ առանցքային նշանակություն՝ քրիստոնեական կանոնադրական դրույթների հստակեցման, տոնածիսական հարցերի վերաբերյալ դիրքորոշումների միօրինակացման և դավանա-



կան սկզբունքների ամրագրման համար: Ժողովում Հայ եկեղեցու պատվավոր ներկայացուցիչը Սուրբ Գրիգոր Լուսավորիչն առաջելաշավիլ Հայրապետի իրավահաջորդն էր՝ Սուրբ Արիստակեսը (325–333 թթ.): Ժողովի ժամանակ ընդունված 20 կանոններն Արիստակեսը բերել և ներկայացրել է իր սրբակենցաղ հայր-առաջնորդին և Հայոց Տրդատ արքային, որոնց կողմից նա պատվիրակվել էր Նիկիա: Հայ եկեղեցու ժողովական կյանքը նշանավորող այս իրադարձությունը տեղ է գտել Ոսկեդարի մեր բոլոր հեղինակների պատմական աշխատասիրություններում՝ տարբերվող համատեքստերով և իրար լրացնող սկզբնաղբյուրային բացառիկ տեղեկություններով:

Այսպես՝ 4–5-րդ դարի հայ պատմագիր Փավստոս Բուզանդն

իր «Հայոց պատմության» մեջ Նիկիայի ժողովին անդրադառնում է Մեծ Հայքի քրիստոնյա քարոզիչներից Հակոբ Մծբնացիի Հայրապետի (որը մասնակցել է Նիկիայի ժողովին) գործած սքանչելիքների մասին ավանդագրույցները ներկայացնելիս: Հաղորդած տեղեկությունների համաձայն Նիկիայի ժողովը, որին ներկա է եղել 318 եպիսկոպոս, գումարվել է եգիպտացի Արիանոս (Արիոս) Ալեքսանդրացու աղանդի քննության համար: Հաջորդիվ պատմիչը հյուսում է Հակոբ Մծբնացու խոնարհ կերպարանքի, նրան ուղեկից հրեշտակի ներկայության և Կոստանդինոս թագավորի աստվածասիրության և նշանագիտության մասին ժողովողական գրույցները: «Բայց այս Հակոբ գործեր սքանչելիս մեծամեծս. եւ սա դիպեցաւ ի մեծ սիւնհողոսին ի Նիկիայ, որ

եղել յամս Կոստանդինոսի կայսեր Հռոմոնոց, ուր ժողովեցան երեք հարկեր եւ ութնասն եպիսկոպոսք, վասն անիծեալ աղանդոյն Արիանոսի Աղէքսանդրացոյ, որ էր ի նահանգէ անտի Եգիպտոսի: Արդ ամենայն եպիսկոպոսքն նստելին առաջի Կոստանդինոսի. եւ ի Հայոց էր անդ Արիստակէս, որդի Գրիգորի սքանչելոյ՝ առաջի կաթողիկոսին Հայոց Մեծաց» (Փավստոս Բուզանդ, «Պատմութիւն Հայոց», Երրորդ դպր., գլ. Ժ): Համաձայն Ոսկեդարի ականավոր մյուս պատմիչ Ագաթանգեղոսի Պատմության մեջ առկա վկայությունների՝

1. Նիկիայի ժողովը գումարվել է ըստ Կոստանդինոս կայսեր հրամանի,
2. Սուրբ Գրիգոր Կաթողիկոսն ու Տրդատ արքան Արիստակեսին են ուղարկել՝ ժողովին մասնակցելու,
3. Ժողովի ժամանակ հաստատվել են «աւանդութեան» հավատքը, «լուսաւորութեան» կարգերը, «պայմանաւոր» կանոններ,
4. Կոստանդինոսի կողմից հավատքի խոստովանությունը դարձավ առիթ, որ նա մեծ անուն վաստակի, և արդարություն հաստատվի երկնքում,
5. Երանելի Արիստակեսն իր հետ Հայաստան է բերել ավանդվածը՝ նիկիական հավատքը (հավատաճրջ) և կանոնները,
6. Սուրբ Գրիգորը բերվածին ևս նոր կանոններ է ավելացրել՝ ըստ Հայ եկեղեցում առկա խնդիրներին՝ Տրդատ արքայի հետ միաբան պայծառացնելով Հայոց աշխարհը: Հովհան Օձնեցին «Սակս ժողովոց» գրության մեջ վկայակոչում է Ագաթանգեղոսի կողմից այս հիշատակությունը, միևնույն ժամանակ Նիկիայի ժողովի գումարման

թվականը (325 թ.) ներկայացնում հայոց ժամանակագրությամբ (Սուրբ Գրիգորի կաթողիկոսության 20-րդ և Տրդատ արքայի թագավորության 37-րդ տարում):

Ոսկեդարի հանճարեղ մյուս հեղինակը՝ պատմահայր Սուրբ Մովսես Խորենացին, իր Պատմության երկրորդ գրքում (ՁԹ, Դ) ավելի համակողմանի, համընդգրկուն ու բացառիկ տեղեկություններ է փոխանցում Նիկիայի ժողովի գումարման և Արիստակեսի մասնակցության մասին: Եթե Ագաթանգեղոսի փոխանցած տեղեկությունները սակավ են և զուտ հայկական ավանդությունից բաղկած, ապա Խորենացին օգտվել է եկեղեցական պատմագիրներից և գուցե օտար այլ աղբյուրներից՝ ավելի ստույգ ներկայացնելով եղելությունները: Խորենացին բացատրում է Արիոսի ուսմունքի էությունը («ոչ գու՞ զմորդի հաւասար Հաւր, եւ ոչ ի բնութենէ եւ յնութենէ Հաւր. եւ ոչ ծնեալ ի Հաւրէ յառաջ քան զյաւրեանս, այլ աւտար զոմ եւ արարած եւ կրտսեր, եւ յետ ժամանակի գոյացեալ»), թվարկում Նիկիայի ժողովի ուղղափառ մասնակիցներին (Բիտոն և Բիկենդ երեցները Հռոմից՝ Սեղեստրոս պապի փոխարեն, Ալեքսանդր Ալեքսանդրացի, Եփեսոսեան Ամտիրացի, Մակար Երուսաղեմացի, Ալեքսանդր Կոստանդնուպոլսեցի), ներկայացնում Հայոց Տրդատ արքային ուղղված Կոստանդինոսի հրովարտակը՝ Սուրբ Գրիգորի հետ ժողովի մեկնելու վերաբերյալ, նշում նրանց չմասնակցելու պատճառները (Տրդատը մտահոգված էր, որ իր բացակայության ժամանակ գուցե պարսիկները հարձակվեն, իսկ Սուրբ Գրիգորը հրաժարվեց՝

Վոյտերի մահը և պատմության դառը հեգնանքը

Այս ժողովորդը մոտ է Ինձ իր բերանով,
իր շրթունքներով է մեծարում Ինձ, բայց
սրտով հեռացել ու մեկուսացել է Ինձնից.
զուր է Ինձ պաշտում, մարդկանց պատվիրաններն ու վարդապետություններն է ուսուցանում: Դրա համար էլ ես պիտի փոխեմ այդ ժողովորդին, պիտի այլափոխեմ նրան, պիտի կորցնեմ իմաստունների իմաստությունը և արհամարհեմ խորհրդականների խորհուրդները
(Եսայի 29. 13–14):

1778 թ. իր առանձնատաճը կյանքի վերջին օրերն ու ժամերն էր ապրում ֆրանսիացի 84-ամյա փիլիսոփա, գրող և հրապարակախոս Վոլտերը՝ Լուսավորականության թերևս ամենակարկառուն դեմքերից մեկը: Ամսաճնելի ցավերից գալարվելով՝ նա իր բժշկին մերթ թախանձանքով, մերթ իր հետ միասին դժոխքում հայտնվելու սպառնալիքով, մերթ իր ունեցվածքի կեսը խոստալով՝ աղաչում էր իր կյանքը գեթ կես տարով երկարեցնել, բայց ապարդյուն. բժիշկը ոչինչ չէր կարող անել: Իսկ իր գաղափարակից բարեկամներին աղերսում էր քահանայի բերել՝ մեղքերի քավությամբ հոգին թեթևացնելու, բայց դարձյալ ապարդյուն: Չարմացած գաղափարակիցներն ի զորու չէին հասկանալու մահացողին, որն իր բովանդակ գիտակից կյանքում մոլեռանդորեն պայքարել էր Կաթոլիկ եկեղեցու, հոգևորականության և, առհասարակ, քրիստոնեության դեմ: Նա աղաղակում էր. «Ես լքված եմ Աստծուց և մարդկանցից: Ես դժոխք կգնամ: Ո՛հ, Քրիստոս: Ո՛հ, Հիսուս Քրիստոս»:

Իսկ հետագայում, երբ նրա կյանքի վերջին ժամերի ուղեկից գթության քրոջն առաջարկեցին մի մահամեծծ անգլիացու ևս օգնել, նա անմիջապես հարցրեց. «Իսկ այդ անգ-

լիացին քրիստոնյա՞ է»: «Այո՛, պատասխանեցին նրան, — քրիստոնյա է և չափազանց երկյուղած այր: Իսկ ինչո՞ւ եք հարցնում»:
«Ես Վոլտերի մահվան մահճի բուժքույրն եմ եղել, — պատասխանում է գթության քույրը, — և Ձեզ կասեմ, որ Եվրոպայի բոլոր հարստությունների դիմաց էլ չէի ուզեմ տեսնել մեկ այլ անաստվածի մահը: Դա մի սահմանեցուցիչ բան էր»:

Ի դեպ, Վոլտերը խորապես համոզված էր, որ իր մահից հարյուր տարի անց քրիստոնեությունն արդեն անհետացած կլինի, բայց պատմության դառը հեգնանքով քսանհինգ տարի անց նրա առանձնատունը ձեռք բերվեց Բրիտանական աստվածաշնչային ընկերության կողմից, իսկ այն տպագրական սարքերը, որոնցով տպվում էին վոլտերյան հակաեկեղեցական գրքերը, սկսեցին ծառայել Աստվածաշունչ մատյանի տպագրությանը: Ընդ որում՝ ֆրանսիացի փիլիսոփան մույնքան համոզված էր, որ քրիստոնեությանը վերջին ջախջախիչ հարվածները կհասցնի իր սիրելի և խոստումնալից աշակերտ Լյա Գարպը: Բայց այնպես պատահեց, որ Ֆրանսիական հեղափոխության դժնդակ տարիներին նրա աշակերտը ձերբակալվեց և բանտ նետվեց, ուր ամեն օր իր մահապատժին էր սպասում: Այդ սարսափազդու օրերին նրա ձեռքը Սուրբ Գիրք է ընկնում, որն ընթերցելիս էլ ի խորոց սրտի դարձի է գալիս, ապա հրաշքով ազատվում բանտից և քրիստոնեական հավատի աննկուն պաշտպանն ու քարոզիչը դառնում:

«Օ՛, խորություն Աստծո՛ւ հարստության, իմաստության և գիտության: Ինչքան անքննելի է Նրա դատաստանները, և անգնելի՛ Նրա ճանապարհները» (Հռոմ. 11.33):

17-րդ դ. վերջին նախ՝ Անգլիայում, ապա՝ Եվրոպայի տարբեր երկրներում և Ամերի-

կայում սկզբնավորվեց գաղափարական և հասարակական մի բուռն շարժում, որի ներկայացուցիչները, Վոլտերի բնորոշումով իսկ, կոչվեցին լուսավորականներ, որոնք ձգտում էին վերացնել հասարակությունում առկա քաղաքական, իրավական, կրթական, մշակութային և այլ թերություններ՝ բարու, արդարության և գիտության տարածման ճանապարհով: Նրանք այդ խնդիրների բուն պատճառը համարում էին ոչ միայն առկա կարգերը, այլև մարդկանց տգիտությունը, իրենց իսկ էությունը ճիշտ չհասկանալը, իսկ դրանց լուծումը բացառապես մարդկային բանականության միջոցով կարող է լինել, որի ամենագործողն անսահման հավատ էին ընծայում: Եվ բնավ պատահական չէ, որ այդ ժամանակաշրջանը կոչվեց նաև բանականության կամ փիլիսոփաների դար:

Միասնական լինելով իրենց առաջ ծառացած նպատակների և տեսլականի հարցում՝ դրանց կյանքի կոչման ճանապարհին եվրոպական երկրներից յուրաքանչյուրը փոքրիշատե տարբերվում էր մյուսներից՝ կրելով ազգային ինքնատիպության կնիքը, իր անցած ուղու առանձնահատկությունները: Այսպես՝ անգլիական լուսավորականության ներկայացուցիչները, փոքր բացառությամբ, ճիշտ դիրքորոշում ունեին հասարակական համերաշխության, հավատի, կրոնի և եկեղեցու նկատմամբ, ինչը թույլ էր տալիս ներդաշնակորեն համատեղել ավանդական արժեքները (որոնց պահպանումը եկեղեցին էր) նորարարական գաղափարների հետ՝ այդպիսով ապահովելով երկրի բնականոն զարգացումը: Այլ էր վիճակը, օրինակ, Ֆրանսիայում, ուր անտագոնիստական հակաություններ կային դասակարգերի և խավերի միջև, ու շատ ուժեղ էր այդ շարժման աթեիստական, դեիստական, սենսուալիստական և մա-

տերիալիստական, հակամիապետական, հակաեկեղեցական և հակաավատական (հակաֆեոդալական) թևը (Մոնտեսքյու, Դելվեցիուս, Դոլբախ, Լամարտին, Դիդրո և, իհարկե, Վոլտեր):

Վոլտերը երբեք աթեիստ չի եղել. նա դեիստ էր (այս ուսմունքի հետևորդները հավատում էին Աստծուն՝ գերագույն բանականությանն ու արաջագործությանը՝ որպես Նրա ձեռքի գործ, բայց և ընդունում, որ Նա անդրաշխարհային է և բացարձակապես չի մասնակցում երկրային գործընթացներին): Վոլտերը մինչև իսկ համոզված էր, որ՝ «Հավատն առ բարի գործերի համար վարձահատույց եղող, իսկ չար գործերի համար պատժող և փոքր մեղքերը մեղող Աստված, մարդկային ցեղի ամենաօգտակար հավատն է»:
«Ես ուզում եմ, որ իմ մատակարարը, դերձակը, իմ ծառաները, իմ կինն առ Աստված հավատ ունենան. կարծում եմ, որ այդժամ ինձ ավելի քիչ կխաբեն ու կղաղաճանեն»:
Այդուհանդերձ՝ զարմանալիորեն չարությանը էր տոգորված Քրիստոսի եկեղեցու, քրիստոնեության, հոգևորականության, կրոնն արդարացնող սխոլաստիկ և բնազանցական (մետաֆիզիկական) հավակարգերի, Աստվածաշունչ մատյանի, և ինչպես ինքն էր կարծում, կրոնական մոլեռանդության ու անհանդուրժողականության նկատմամբ:

Վոլտերը մեկ անգամ բանտարկվել է, ապա արտաքսվել Անգլիա, իսկ 60-ականներից սկսյալ՝ կենաց-մահու պայքար մղել Կաթոլիկ եկեղեցու դեմ: Առիթը բաց չի թողել վատաբանելու, իր սրախոս և կծու լեզվով ծաղրի ենթարկելու հոգևորականությանը, իսկ ավելի հաճախ իր ստեղծագործություններն ավարտում էր «Ճգմեք սողունին», այսինքն՝ Կաթոլիկ եկեղեցուն, արտահայ-

